

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## **Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015**

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան .....	3
1. Կարգավորվող ոլորտի հիմնախնդիրները և կարգավորման միջոցառումները .....	3
1.1. Էներգետիկայի բնագավառ .....	4
1.2. Ջրային համակարգ .....	5
1.3. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ .....	6
1.4. Հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի, բնագավառ .....	8
1.5. Փոստային կապի և տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառներ .....	10
2. Արտաքին կապեր .....	10
3. Համագործակցություն .....	11

## Նախաբան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի տարեկան գործունեության ծրագիրը մշակվել է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթների ու այլ իրավական ակտերի հիման վրա և ամփոփ տեղեկություններ է պարունակում կարգավորվող ոլորտի մասին, սահմանում է Հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև կարգավորման քաղաքականության և տնտեսական մրցակցության սկզբունքների ներդրման հիմնական ուղղությունները:

Ծրագրի նպատակն է 2016 թվականի ընթացքում շարունակել և զարգացնել պետական քաղաքականության մաս հանդիսացող կարգավորման գործընթացը, որը կոչված է պաշտպանելու և հավասարակշռելու կարգավորվողների ու սպառողների շահերը, նպաստելու երկրի տնտեսության զարգացման գործընթացին, ապահովելու բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր և այլն:

Ծրագրի նպատակներից ելնելով՝ ներկայացվել են կարգավորվող ոլորտում առկա հիմնախնդիրները, սահմանվել են կարգավորման միջոցառումները, այդ թվում նաև Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովման, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, Հանձնաժողովի կառավարման համակարգի կատարելագործման, կադրերի որակավորման բարձրացման հարցերին առնչվող միջոցառումները, դրանց իրականացման մեխանիզմները:

Ծրագրում ներառվել են նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ համագործակցության համաձայնագրերով և համատեղ աշխատանքային ծրագրերով ամրագրված ուղղությունները:

### 1. Կարգավորվող ոլորտի հիմնախնդիրները և կարգավորման միջոցառումները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովն իրականացնում է էներգետիկայի, հեռահաղորդակցության (այդ թվում նաև հեռուստատեսության և ռադիոյի), տնտեսական մրցակցության պաշտպանության, փոստային կապի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների սահմանման և վերանայման մասով) բնագավառների և ջրային համակարգի կարգավորումը, որի նպատակն է հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Հանձնաժողովը կարգավորվող ոլորտում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

**-Կարգավորման իրավական դաշտի կատարելագործում,** որը կարևորագույն գործառույթներից է՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, և ունի շարունակական բնույթ:

Հանձնաժողովը 2016 թվականին նախատեսում է աշխատանքներ իրականացնել «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում բարեփոխումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների մշակման, ինչպես նաև «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի՝ «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների դրույթներին համապատասխանեցման ուղղությամբ:

**-Լիցենզավորում,** որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն:

**-Սակագնային քաղաքականություն,** որը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

**-Կարգավորվող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծություն,** ինչը հիմք է հանդիսանում հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների վերահսկման համար:

Հանձնաժողովն իրականացնում է նաև՝

- իր կողմից ընդունված որոշումների կատարման (պահպանման) նկատմամբ վերահսկողություն,

- իր գործունեության հրապարակայնության և թափանցիկության ապահովում զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային կայքի միջոցով,

- հրապարակային բացատրական աշխատանքներ՝ օրենքի դրույթներով սահմանված պատասխանատվության մասին հասարակությանն իրազեկելու նպատակով,

- իր իրավասության շրջանակներում այլ գործունեություն:

Այս համատեքստում 2016 թվականին շարունակվելու են Հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումները, որոնք ստորև ներկայացված են ըստ բնագավառների:

## **1.1. Էներգետիկայի բնագավառ**

Էներգետիկայի բնագավառում սպառողների սպասարկման որակի բարելավման և մատակարար-սպառող հարաբերություններում ծագող տարածայնությունների կարգավոր-

ման նպատակով՝ էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում կատարվելու են մի շարք փոփոխություններ: Վերանայվելու են մատակարար-սպառող հարաբերությունները կարգավորող դրույթները, խստացվելու է մատակարարի պատասխանատվությունը, մշակվելու են հաշվառքի սարքերի խափանման դեպքերում ծախսված էլեկտրական էներգիայի կամ բնական գազի քանակի վերահաշվարկի հատուկ մեխանիզմներ:

Շարունակվելու են նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կատարելագործման և վերահսկման աշխատանքները:

2016 թվականին լրամշակվելու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկաները և միաժամանակ լրացումներ և փոփոխություններ են կատարվելու էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգում:

Լրամշակվելու են լիցենզավորված ընկերությունների կողմից Հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ձևերը՝ տեղեկատվությունների քանակը կրճատելու նպատակով:

Հանձնաժողովը ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման նպատակով 2016 թվականի ընթացքում շարունակելու է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը, հաշվի առնելով, որ կարգավորվող ընկերությունների կատարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում և հետևաբար անմիջական ազդեցություն ունեն սակագների վրա: Ներդրումային ծրագրերի համաձայնեցումը Հանձնաժողովի հետ կարգավորման կարևոր լծակներից է և հնարավորություն է տալիս վերահսկելու ներդրումների արդյունավետությունը՝ դրանք նպատակաուղղելով բնագավառներում նորարարական, ավելի էներգախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ենթակառուցվածքների վերակառուցմանը:

2016 թվականի վերջում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կառուցման փուլում է գտնվելու 4 փոքր հիդրոէլեկտրակայան, որոնց գումարային հզորությունը կկազմի 15.195 ՄՎտ, ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն ավելի քան 41.8 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա: Բարենպաստ պայմաններ ստեղծելով և խթանելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը, միաժամանակ կվերահսկվի դրանց կառուցման ընթացքը, լիցենզավորված գործունեության իրականացման պայմանների պատշաճ կատարումը:

## **1.2. Ջրային համակարգ**

Կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի բարելավման կարգավորման նպատակով վերանայվելու են «Ջրմուղ-Կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները:

2016 թվականին նախատեսվում է ջրային համակարգի օգտագործման թուլլտվություններ տրամադրել մի շարք ընկերությունների:

Հանձնաժողովի հաստատման են ներկայացվելու սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ, և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար, ինչը հնարավորություն կտա բացահայտելու առավել վատթար վիճակում գտնվող սպառողներին:

### 1.3. Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու և խրախուսելու, ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու տեսանկյունից առավել քան կարևոր է իրականացնել աշխատանքներ մրցակցության պաշտպանության բոլոր ոլորտներում: Տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող տարաբնույթ գործողությունները, որոնք կարող են հանգեցնել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, գերիշխող դիրքի չարաշահումների, հակամրցակցային համաձայնությունների, ինչպես նաև արգելված համակենտրոնացումների, ի վերջո խոչընդոտներ են ստեղծում ազատ մրցակցային դաշտի ձևավորման և սպառողների շահերի պաշտպանության գործում: Վերոնշյալ դրսևորումների դեմ արդյունավետ և հետևողական պայքարելու նպատակով համապատասխան աշխատանքների իրականացումը Հանձնաժողովի առաջնահերթ ուղղություններից է:

Հաշվի առնելով նախորդ տարիների աշխատանքային փորձը՝ Հանձնաժողովը 2016 թվականին նպատակաուղղված է կատարել իր առջև դրված խնդիրները հետևյալ ուղղություններով՝

#### *Անբարեխիղճ մրցակցություն.*

Ապրանքային շուկաներում բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու նպատակով 2016 թվականին շարունակվելու են իրականացվել շաբաթական դիտանցումների արդյունավետության բարձրացմանը, տնտեսավարող սուբյեկտների և սպառողների կողմից դիմում-բողոքների խրախուսմանն ու ընթացքավորմանն ուղղված միջոցառումներ: Տնտեսավարող սուբյեկտների կամ նրանց գործունեության վերաբերյալ շփոթության առաջացման, վարկաբեկման, հասարակության մոլորեցման, այլ տնտեսավարող սուբյեկտների համբավի, վարկարժեքի վնասման և նման անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացառման նպատակով Հանձնաժողովը հետևելու է տարբեր լրատվամիջոցների և կայքերի հրապարակումներին, գովազդներին:

Նշված ոլորտում նախորդ տարիներին բացահայտված խախտումները ցույց են տվել, որ բավականաչափ հաճախ են հանդիպում հասարակության մոլորեցմանն ուղղված գործողություններ, որոնք վերաբերում են կեղծ և անորակ ապրանքների իրացմանը: Դրանից ելնելով՝ 2016 թվականին Հանձնաժողովն իր ուշադրության կենտրոնում կպահի այդ խնդիրները:

Հանձնաժողովի կողմից շարունակական միջոցառումներ են իրականացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում մրցունակության զարգացման, չհիմնավորված գների բացահայտման և անբարեխիղճ մրցակցության դեպքերի կանխարգելման նպատակով: Ուսումնասիրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում գործող մանրածախ գները, անբարեխիղճ մրցակցության հնարավոր դրսևորումները, ինչը նախատեսվում է իրականացնել նաև 2016 թվականի

ընթացքում՝ տարածաշրջանում մրցակցային միջավայրի զարգացումը խթանելու նպատակով:

#### ***Ապրանքային շուկաների ուսումնասիրություն.***

Հանձնաժողովը 2016 թվականին շարունակելու է իրականացնել աշխատանքներ տարբեր ապրանքային շուկաներում էական ազդեցություն ունեցող սուբյեկտների բացահայտման և կենտրոնացվածության աստիճանի որոշման գործում: Այս ուղղությամբ 2015 թվականին նախաձեռնվել է «Հնդկաձավար», «Կարագ», «Շաքարավազ», «Ձեթ», «Բրինձ», «Ոսպ» ապրանքային շուկաների ուսումնասիրություն: Ինչպես ընթացիկ, այնպես էլ ծրագրավորվող տարում նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություններ առաջին անհրաժեշտության ապրանքային շուկաներում, քանի որ նշված ապրանքային շուկաներում մրցակցության խրախուսումը և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների չարաշահումների բացառումն առավել կարևոր հիմնախնդիրներից է: Այդ իսկ պատճառով 2016 թվականին նախատեսվում է իրականացնել «Աղ», «Թեյ», «Սուրճ», «Շշալցված աղբյուրի ջուր», «Շշալցված հանքային ջուր» և «Գազավորված քաղցրացված ըմպելիք» ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն:

Այժմ հաշվառված են և վերահսկվում են 53 ապրանքային շուկաներում գործող 5 մենաշնորհ և 27 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ:

#### ***Գերիշխող դիրքի վերահսկողություն.***

Գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեության վերահսկողությունը, հատկապես գնային քաղաքականության առումով, մշտապես գտնվում է Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում, քանի որ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող գնային քաղաքականությունը վճռորոշ ազդեցություն է թողնում շուկայում գների ձևավորման գործում: Այդ իսկ պատճառով նախատեսվում է շարունակել պարենային և ոչ պարենային ապրանքային շուկաների շաբաթական դիտանցումները: Այս միջոցառումները թույլ են տալիս անմիջապես հայտնաբերել և ուսումնասիրել այս կամ այն ապրանքային շուկաներում արձանագրված գնաճը: Գների դիտանցումն հանդիսանում է գների փոփոխությանը հետևելու լծակ, գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումների, ինչպես նաև հնարավոր հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և կանխարգելման օպերատիվ միջոցներից մեկը, որը հնարավորություն է ստեղծում որոշակիորեն զսպել գների արհեստական բարձրացման միտումներն, ինչպես նաև կանխել գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից չհիմնավորված գների սահմանումը:

#### ***Հասարակության և տնտեսավարող սուբյեկտների ակտիվության բարձրացում.***

Ազատ մրցակցային միջավայրի ստեղծման և սպառողների շահերի պաշտպանության գործում չափազանց կարևոր է հասարակության և տնտեսավարող սուբյեկտների ներգրավվածությունը: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովը շարունակելու է իրականացնել աշխատանքներ հասարակության և տնտեսավարող սուբյեկտների ակտիվությունը, մոլորեցման դեպքերի և մրցակցային խոչընդոտների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Այս ուղղությամբ 2016 թվականին շարունակվելու է դեռևս 2015 թվականին նախաձեռնված՝ Ստեփանակերտ քաղաքում համենատաքար էժան և մեծ պահանջարկ ունեցող 10 խանութներում գործող՝ ռազմավարական նշանակության 20 ապրանքատեսակների մանրածախ գների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը Հանձնաժողովի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում: Սա նախադեպը չունեցող ծրագիր է, որը հնարավորություն է տալիս սպառողին ավելի հեշտ կողմնորոշվելու շահավետ գումարներ իրականացնելու համար և

խրախուսում է մրցակցությունը մանրածախ առևտրի ոլորտում հրապարակվող ապրանքատեսակների գնային քաղաքականության մասով: Միաժամանակ պետք է նշել, որ այս և նմանատիպ նախաձեռնությունների արդյունավետությունը կախված է հասարակության ներգրավվածության աստիճանից: Չափազանց կարևոր է նաև տնտեսավարող սուբյեկտների ակտիվությունը հակամրցակցային համաձայնությունների, արգելված համակենտրոնացումների և պետական օժանդակությունների բացահայտման և կանխարգելման գործում: Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը նախատեսում է 2016 թվականին իրականացնել նաև հանդիպումներ գործարար միջավայրի և հասարակության ներկայացուցիչների հետ:

#### **1.4. Հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի, բնագավառ**

Հեռահաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի բնագավառները, իրենց բազմաբնույթ ուղղություններով, խնդիրներով և գործառնություններով շարունակում են մնալ Հանձնաժողովի գործունեության գերակա ուղղություններից: Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման միջազգային միտումները, կարգավորման հեռահար և մոտակա հիմնական նպատակներն ուրվագծող կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ 2016 թվականին Հանձնաժողովը շարունակելու է ոլորտում մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության մեծացման և մատչելիության ապահովման, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Հիմնվելով նախորդ տարիներին իրականացված միջոցառումների և աշխատանքների արդյունքների վրա՝ 2016 թվականի ընթացքում հեռահաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի բնագավառներում Հանձնաժողովը նախատեսում է իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումներն ու աշխատանքները՝

**լիցենզավորման և կարգավորվող ընկերությունների գործունեության վերահսկման ուղղությամբ.**

-հետևողական աշխատանքներ իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում պարբերաբար ծագող խնդիրների լուծման նպատակով իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ,

-խրախուսել ընկերությունների այն նախաձեռնությունները, որոնք կնպաստեն տեղեկատվական և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում նոր տեխնոլոգիաների ներդրմանը,

-համագործակցելով ոլորտի իրավասու մարմնի հետ՝ հայտնաբերել և օրինական դաշտ ներգրավել առանց ցանցի կամ ծառայությունների մատուցման լիցենզիայի էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող անձանց, ինչպես նաև ուսումնասիրել և օրենսդրության պահանջներին բավարարելու դեպքում լիցենզավորել ցանցի կամ ծառայությունների մատուցման լիցենզիայի ստացման հայտեր ներկայացրած տնտեսավարողներին,

-օրենսդրության պահանջներին և լիցենզիայի պայմաններին ու այլ իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխանության ստուգման նպատակով՝ կազմակերպել մոնիթորինգներ և ստուգումներ լիցենզավորված անձանց այն տարածքներում, որոնք օգտագործվում են հանրային էլեկտրոնային հաղորդակցության



ծառայությունների մատուցման կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման նպատակով,

-էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի լիցենզավորված ընկերությունների միջև վեճերի ծագման դեպքերում՝ կազմակերպել վեճերի լուծման գործընթացը գործարար շրջանառության խելամիտ և պատշաճ սովորույթներին, ինչպես նաև արդարադատության սկզբունքներին համապատասխան,

-Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի զարգացման նպատակով՝ 2016 թվականի ընթացքում հայտարարել ռադիոհաղորդումների հեռարձակման (վերահեռարձակման) լիցենզավորման մրցույթներ մի շարք ազատ (չգրադեցված) հաճախականություններով,

-շարունակել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի արտոնագրված հեռուստառադիոընկերությունների եթերների ընտրանքային դիտարկումների իրականացման գործընթացը, որի արդյունքները կհամադրվեն հեռուստառադիոհաղորդումների գրանցամատյանների ամենամյա տվյալների հետ, ինչը թույլ կտա ստուգել վերջիններիս եթերների բովանդակության համապատասխանությունը ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին և տրամադրված արտոնագրերի պայմաններին,

-իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի բնագավառների կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծությունները, որոնց արդյունքները հիմք կհանդիսանան կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև լիցենզիաների պայմանների վերահսկման համար, պարբերաբար կազմել կարգավորվող ընկերությունների ֆինանսական և ծավալային ցուցանիշների վերաբերյալ համապատասխան ամփոփագիր՝ ընտրանքային սկզբունքով իրականացվող հեռուստառադիոեթերների և կարգավորվողների գործունեության տարածքներում իրականացվող մոնիթորինգների միջոցով ստացված տվյալների հիման վրա,

- էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի բնագավառների կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվությունների վերլուծության արդյունքների հիման վրա ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա,

-աշխատանքներ տանել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հեռուստառադիոընկերությունների միջև արդեն ստեղծված համագործակցության դաշտի ընդլայնման ուղղությամբ.

#### **սակագնային քաղաքականության ուղղությամբ.**

-իրականացնել ոլորտի գերիշխող օպերատորների կողմից ներկայացված կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ պահանջված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների կարգավորման ենթակա սակագների սահմանման և վերանայման հայտերի ուսումնասիրության, վերլուծության և համապատասխան սակագների սահմանման գործընթացը՝ ծառայություններ մատուցողների կողմից գանձվող վճարները կարգավորելիս ապահովել, որպեսզի տվյալ ծառայություններ մատուցողները հնարավորություն ունենան արդյունավետ կառավարման հիման վրա ստանալու հանրությանը ծառայություններ մատուցելու գործում իրենց կատարած ներդրումների ողջամիտ արժեքի նկատմամբ եկամտաբերության ողջամիտ մակարդակ,

-կազմակերպել կլոր սեղան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ինտերնետ-պրովայդերների մասնակցությամբ՝ ցանցերի միջև թրաֆիքի

փոխանակման ոլորտում տեխնիկական փոխգործակցության ստեղծման նպատակով: Պիրինգը թույլ կտա կրճատել ցանցերի միջև փաթեթների փոխանցման ուղիները և խուսափել մեկ հանրապետության կամ քաղաքի տարբեր ինտերնետ-պրովայդերների միջև տեղեկատվության փոխանցման ընթացքում միջազգային և միջքաղաքային կապի ալիքների օգտագործումից:

### **1.5. Փոստային կապի և տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառներ**

Այս բնագավառներում կարգավորվող ընկերությունների կողմից Հանձնաժողով են ներկայացվում ֆինանսական հաշվետվություններ, տեխնիկատնտեսական տեղեկատվություններ, որոնց վերլուծության արդյունքներով ստեղծվում է տեղեկատվական բազա:

## **2. Արտաքին կապեր**

Հանձնաժողովի գործունեության ռազմավարական կարևոր բաղադրիչներից է թափանցիկ և հրապարակային գործունեության շնորհիվ հասարակության հետ արդյունավետ կապերի ամրապնդումը: Այդ գործառույթն իրականացվում է երկու հիմնական ուղղություններով՝ զանգվածային լրատվամիջոցների, պետական կառույցների, գործարար հանրության, սպառողների և հասարակական կազմակերպությունների հետ և Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովների ու նրանց միջոցով նաև միջազգային կառույցների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղություններով:

Շարունակելով զարգացնել Հանձնաժողովի կողմից որդեգրված բաց աշխատանքը՝ 2016 թվականին Հանձնաժողովը կփորձի առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Հանձնաժողովում գործում է թեժ գիծ, որի միջոցով բնակիչները կարող են ներկայացնել բողոք, հարցադրում, առաջարկություն, ստանալ տեղեկատվություն կամ խորհրդատվություն իրենց իրավունքների, դրանց խախտման դեպքում անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ: Քաղաքացին կարող է նաև անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ Հանձնաժողովի [www.kargavorum.nkr.am](http://www.kargavorum.nkr.am) պաշտոնական կայքի «Հարց ու պատասխան» բաժնից: Ծրագրային տարում նույնպես Հանձնաժողովի դիտակետում կլինի հանրության հետ հետադարձ կապի ապահովման խնդիրը, որի շրջանակներում սահմանված կարգով և ժամկետներում պատասխաններ կտրվեն բարձրացված գրավոր և բանավոր հարցերին:

Զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը 2016 թվականին ևս միտված կլինի Հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը պատշաճ լուսաբանելու և հանրությանն ընկալելի ներկայացնելու խնդրին: Լրատվամիջոցների համար պարբերաբար կթողարկվեն համառոտ ծանուցումներ, կտրվեն մամուլի հաղորդագրություններ, հանձնաժողովի նիստերի մասին ամփոփիչ տեղեկանքներ: Հանձնաժողովի գործունեության և հանրային ընկալման առումով հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին պաշտոնական տեղեկատվությունները կիրապարակվեն մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներով: Հանձնաժողովի անդամները և

աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան պարզաբանումներով և հարցազրույցներով:

Ընդհանուր առմամբ 2016 թվականին կշարունակվեն Հանձնաժողովի գործունեությունը հանրության համար ավելի բաց ու թափանցիկ դարձնելու աշխատանքները:

### 3. Հանագործակցություն

Հանձնաժողովը ծրագրային տարում նախատեսում է շարունակել ակտիվ հանագործակցությունը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ: Այս ուղղությամբ տարվող աշխատանքները միտված են՝

- համանման կառույցների հետ փորձի փոխանակմանն ու հանագործակցությանը,
- Հանձնաժողովի իրավասության շրջանակներում համաշխարհային տնտեսական միջավայրին ինտեգրվելու գործընթացի աջակցությանը,
- Հանձնաժողովի շահերից բխող տեխնիկական աջակցության ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

2015 թվականին զգալի աշխատանքներ են կատարվել Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հետ հանագործակցության շրջանակներում: Կարևորելով երկու պետությունների տնտեսական զարգացման վրա հեռահաղորդակցության ոլորտի ազդեցությունը, հեռուստատեսության և ռադիոյի՝ որպես զանգվածային լրատվության միջոցների դերը հասարակության մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական տեղեկատվության մատչելիության, ինչպես նաև միջազգային կառույցներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինտեգրման գործում, ծրագրային տարում նախատեսվում է ամրապնդել ձեռք բերված հաջողությունները: Փորձի փոխանակման նպատակով կկազմակերպվեն կարգավորող մարմինների աշխատակազմերի մասնագետների փոխայցելություններ:

Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ հանագործակցությունը նույնպես միտված է առաջընթացի: Փոխգործակցության արդյունքում նախագծվում և հաստատվում են մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման համատեղ գործողությունների շրջանակները, համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները: Հանձնաժողովները շաբաթական կտրվածքով տեղեկություններ են փոխանակում առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների վերաբերյալ, որը թույլ է տալիս համեմատել ներմուծվող ապրանքների գները և դրանց փոփոխության դինամիկան: Նշված տեղեկությունների վերլուծության արդյունքում հնարավոր է դառնում ժամանակին և ճիշտ գնահատել շուկայում տեղի ունեցող գնային փոփոխությունները: Հանագործակցությունն իրականացվում է նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, մրցակցային թեմաներով սեմինարների կազմակերպման, ինչպես նաև համատեղ վարույթների, դիտանցումների, ստուգումների ուղղություններով:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ ևս շարունակվում են համագործակցության համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարման, դրանց արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները: Երկկողմ հանդիպումների և աշխատանքային քննարկումների արդյունքում պարզաբանվում են ոլորտում առկա խնդիրները և նախանշվում դրանց լուծման ուղիները՝ հաշվի առնելով առաջատար երկրների փորձի և դրա արդիականության ու կիրառման հնարավորությունների ուսումնասիրությունները: Պարբերաբար տեղեկություններ են փոխանակվում համատեղ որոշումների ընդունման, օրենսդրական փոփոխությունների հետ կապված հարցերի վերաբերյալ, ինչը կշարունակվի նաև ծրագրային տարում:

Հանձնաժողովը շարունակելու է համագործակցությունը պետական կառավարման մարմինների հետ: Համագործակցությունն առավել կարևորվում է հավաստի տեղեկատվության ստացման, փորձի փոխանակման և կարգավորման քաղաքականության կիրարկման վերաբերյալ հասարակության և պետական այլ մարմինների կողմից ընկալման տեսանկյունից: Կարևորվում է Հանձնաժողովի համագործակցությունը իշխանության բոլոր թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական համակարգի կառույցների հետ: Մասնավորապես, մրցակցության համար բարենպաստ միջավայր ապահովելու և մրցակցության քաղաքականության կիրարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կհամագործակցի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, արդարադատության, Էկոնոմիկայի, ֆինանսների նախարարությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ պետական մարմինների հետ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Հ. ԹՈՐՈՍՅԱՆ**